ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/60

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ
Երրոդ անձ՝ «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Նիկոլյանի, Ռ. Աֆանդյանի,
«Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Մ. Մկոյանի
«Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցում, հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝

Ընկերություն) կողմից 02.07.2021թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 3.1 կետը մասնակի բողոք բերողի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով, դադարեցնելու մասին որոշում:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 3.2 կետը և պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին որոշում:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել բողոք բերողի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 02.07.2021թ.-ին:

06.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/60 համարի ծածկագիրը:

14.07.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

14.07.2021թ.-ին, 23.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. <u>«Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն 02.07.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերն ի թիվս այլ մանակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով (այսուհետ՝ ընթացակարգ):

Հայտարարված ընթացակարգի հարվերով պահանջվել է «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ օգնություն» վկայական:

Բողոք բերողի կողմից հայտով ներկայացվել է պահանջվող վկայականը:

Բողոք բերողի կողմից ներկայացված գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի մասով եղել է 2-րդը Նարեկ Կարապետյան Ա/Ձ-ի առաջարկած գնից հետո, իսկ մյուս երկու մասնակիցների առաջարկած գները գերազանցել են նախահաշվային գինը:

Գնահատող հանձնաժողովի 16.06.2021 թ-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով բողոք բերողի ներկայացված հայտում ի թիվս այլ անհամապատասխանությունների, արձնագրվել է նաև անհամապատասխանություն աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերում:

Գնահատող հանձնաժողովը Կարգով սահմանված կարգով 1 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է շտկել անհամապատասխանությունները:

Բողոք բերողի կողմից սահմանված ժամկետում շտկվել է անհամապատասխանությունը, իսկ աշխատանքային ռեսուսների մասով, ինչպես արդեն նշել եմ, ներկայացվել է հայտով:

Գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ-ի N 3 արձանագրության 3.1 կետով բողոք բերողի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է: Որպես մերժման հինք գնահատող հանձնաժողովը նշել է՝ մեջբերում, «ա. Բարձնության վրա վտանգավոր աշխատանքներ կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ, օգնություն վկայականում նշված է վավերականության ժամկետը՝ մինչև 06.21թ.: Սույն արձանագրության 2.1 կետի ա/ենթակետով նախատեսված փաստաթղթի գործողության վերջնաժամկետի երկարաձգման հետ կապված գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կատարվել է հարցում, որին ի պատասխան ստացվել է հետևյալը. Նշված սերտեֆիակատը ուժի մեջ է մինչև 30.06.2021 թ-ը: Նշված անձը կամ անձը ներկայացնող ընկերությունը կարող է դիմել մեզ սերտեֆիկատի երկարացման համար, անցնելով համապատասխան ուսուցում-վերապատրաստում:

Քանի որ աշխատանքերի կատարումն իրականացվելու է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ պարզաբանումից կարելի է ենթադրել, որ պայմանագրի կատարման ընթացքում համապատասխան ուսուցում-վերապատրաստումից հետո կարող է նաև

չերկարաձգվել Վկայականի ժամկետը, ապա տվյալ փաստաթուղթը չի կարող համարվել վավեր աշխատանքների կատարման փուլում»:

24.06.2021թ-ի N 3 արձանագրության 3.2 կետով գնահատող ժանձնաժողովը ընթացակարգի մասնակիցներից «Տերմոպրոեկտ» և «Պրոթերմ» ՍՊԸ-ներին 2-րդ չափաբաժնի մասով հրավիրել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

28.06.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Տերմոպրոեկտ» ՍՊԸ-ն:

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից բողոք բերողի հայտն անբավարար գնահատելը ոչ իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Սույն ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնին վերաբերող «աշխատանքային ռեսուսները» սյունյակի ռաումնասիրությունից պարզ է դառնում, որ մասնակցի կողմից անհրաժեշտ է ներկայացնել բարձնության վրա վտանգավոր աշխատանքներ կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ, օգնություն վկայական, որն ինչպես արդեն նշել եմ, բողոք բերողի կողմից ներկայացվել է: Այսինքն կարելի է արձանագրել, որ բողոք բերողի կողմից ապահովել է հրավերով նախատեսված պահանջը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերը նշված դրույթներով ամրագրվում է իրավական պետության իշխանության թույլատրելի շրջանակի բովանդակությունն առ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ, հետևաբար՝ այդ լիազորությունները (գործառույթները, իրավունքները և պարտականությունները) կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերին, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում պետական

մարմիններն իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կաշկանդված են իրավունքով և օրենքով, ինչը դրսևորվում է օրենքի գերակայությամբ՝ պետական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է ոչ թե օրենքով, այլ սեփական ենթադրությամբ, որպիսի իրավունքը վերջինիս որևէ իրավական ակտով վերապահված չէ:

Նշեմ ավելին, 30.06.2021թ-ին բողոք բերողին «Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է N 2506.21 վկայականը:

Նման հանգամանքը ևս մեկ անգամ հաստատում է, որ գնահատող հանձնաժողովը ցուցակերել է սուբյեկտիվ և կանխակալ մոտեցում բողոք բերողի նկատմամբ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 3.1 կետը մասնակի բողոք բերողի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով, դադարեցնելու մասին որոշում:
2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 3.2 կետը և պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին որոշում:
3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել բողոք բերողի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10932-2021 գրությամբ դիմել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից 02.07.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 08.07.2020թ.-ի թիվ 28-299 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /այսուհետ՝ ՀՀՌՑ/ կողմից հայտարարված՝ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով

ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ մասնակից Վոլոդյա Բաղդասարյան Արազի ԱՁ-ի 02.07.2021թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

ՀՀ ՌՅ-ի Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով Ընթացակարգի Հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրով 2-րդ չափաբաժնով պայմանագրի կատարման համար պահանջվել են «աշխատանքային ռեսուրսներ». Աշխոեկ՝ առնվազն 1, ներկարար բանվոր՝ առնվազն 4 հոգի, «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայականի առկայությամբ: Նշված չափաբաժնով հայտեր են ներկայացրել 4 կազմակերպություն՝ Նարեկ Կարապետյան ԱՁ, Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ /այսուհետ՝ ԱՁ/, Տերմոպրոտեկտ ՍՊԸ և Պրոթերմ ՍՊԸ:

ԱՁ-ի փաստաթղթերում գրանցվել են անհամապատասխանություններ, որից հետո ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով՝ նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և նիստի կասեցման ավարտին ներկայացվել են ոչ ամբողջական փաստաթղթեր, մասնավորապես.

ա/ «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ, օգնություն» վկայականում նշված է վավերականության ժամկետը՝ մինչև 06.2021թ.,.

-ներկայացված փաստաթղթի գործողության վերջնաժամկետի հետ կապված և հետագա գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կատարվել է հարցում ՀՀ Վտանգավոր բարձրություն ՍՊԸ ուսումնական կենտրոն, որին ի պատասխան ստացվել է հետևյալը.

«Նշված սերտիֆիկատը ուժի մեջ է մինչև 30.06.2021թ.: Նշված անձը կամ այդ անձը ներկայացնող ընկերությունը կարող է դիմել մեզ սերտիֆիկատի երկարացման համար, անցնելով համապատասխան ուսուցում-վերապատրաստում»:

Քանի որ, աշխատանքների կատարումը իրականացվելու է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, ապա պայմանագրի կատարման փուլում աշխատակցի՝ ի դեմս Վոլոդյա Բաղդասարյանի վկայականի բացակայությունը կարող է պարալիզացնել աշխատանքի ընթացքը:

բ/ Արթուր Հարությունի Անդրեասյանին /աշխղեկ/ ՕՀՎ ДПО «УЦ«УККОМ-Центр»-ի կողմից տրված վկայականում նշված 10.07.2019 - 10.07.2022 ժամկետի ընթացքում մասնակցի կողմից չի ներկայացվել՝ 2020թ.-2021թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացությունը ստուգումները անցած որևիցե փաստաթուղթ համաձայն «Բարձրության վրա աշխատելիս աշխատանքի պաշտպանության կանոններ»-ի 15-րդ կետի /Правила по охране труда при работе на высоте п. 15, այն է.

/15. Проверка знаний безопасных методов и приемов выполнения работ на высоте проводится не реже 1 раза в год. Данная проверка знаний безопасных методов и приемов выполнения работ на высоте может проводиться аттестационной комиссией, создаваемой работодателем.

Результаты проверки знаний безопасных методов и приемов выполнения работ на высоте оформляются протоколом с указанием даты проведения проверки знаний, фамилии, имени, отчества лица, прошедшего проверку знаний, результатов проверки знаний./

-տրված փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկատվություն:

գ/ ԱՁ-ի հայտում կան նաև այլ անհամապատասխանություններ.

Մատինյան Կամոին տրվել է միայն «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով» վկայական, առանց «առաջին բուժ, օգնության» նշման:

Այսպիսով՝ քանի որ Հրավերով պահանջվել է աշխղեկ՝ առնվազն 1, ներկարար բանվոր՝ առնվազն 4 հոգի, ապա ԱՁ-ի հայտը մերժվել է, քանի որ թվով 5 ներկայացված անձերից 3 մասնագետների փաստաթղթերը չեն բավարարել Հրավերի պահանջներին և Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ-ի հայտը մերժվել է՝ ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով:

Ըստ այդմ, Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ-ի ներկայացված բողոքը համարում ենք չհիմնավորված:

Հաշվի առնելով հեռուստաաշտարակի ներկման աշխատանքների առանձնահատուկ բնույթը, որը պահանջում է բարենպաստ կլիմայական պայմաններ, ինչպես նաև հրավերով սահմանված՝ աշխատանքների կատարման սահմանափակ-ժամկետները (մինչև 30.09.2021թ.) և դրանց հետաձգման անհնարինությունը, խնդրում ենք որոշումը կայացնել վերը նշված կարևորագույն հանգամանքների նկատառումով և հնարավոր սեղմ ժամկետում:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն 14.07.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Երրորդ անձը, 21.07.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«07.06.2021թ. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով (Հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների ձեռքբերում) էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով 15.06.2021թ.-ին:

16.06.2021թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է Հրավերով պահանջվող, սակայն չներկայացված փաստաթղթեր և անհամապատասխանություններ: Այդ պատճառով էլ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մրցույթի մասնակիցներին շտկել անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի հայտարարությամբ նշվել է նաև, որ շահերի բախում առկա չէ: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 28-ի թիվ 3 արձանագրությամբ գնահատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվել են:

Ի պատասխան «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքի, որում նա չի վիճարկում այն հանգամանքը, որ Պատվիրատուն գործել է իրավաչափ, երբ պահանջել է աշխատանքային ռեսուրսներ և տեխնիկական միջոցներ, այլ, ըստ էության, «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի ներկայացուցիչը վիճարկում է ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գնահատման արդյունքները, ապա հայտնում եմ հետևյալը.

Մեր կողմից ներկայացվող փաստական հանգամանքների օբեկտիվ վերլուծությունը կապացուցի գնահատող հանձնաժողովի որոշման իրավաչափությունը:

Այստեղ պետք է նկատել, որ գնահատող հանձնաժողովը հայտի մերժման հիմքը հայտնաբերելուց հետո չի անդրադարձել հայտը մերժելու համար առկա մնացած այլ հիմքերին, քանի որ արդեն իսկ մեկ հիմքի առկայությունը բավարար է եղել հայտը մերժելու համար:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքը քննում է ի պաշտոնե, պատշաճ մանրամասնությամբ և կաշկանդված չէ բողոքի հիմքերով ու հիմնավորումներով, իր պարտականությունները կատարելիս ղեկավարվում է բացառապես Գնումների մասին օրենսդրական դրույթներով, ուստի ներկայացնում եմ նաև այլ հիմքեր, որոնք ինչպես առանձին վերցված, այնպես էլ վերը նշված հիմքի հետ միասին, լրիվ բավարար են բողոքաբերի և՛ հայտը և՛ սույն բողոքը մերժելու համար:

Այսպես՝

1. Ըստ հրավերի պահանջի՝ մասնակիցները պետք է ունենային և ներկայացնեին բարձր ճնշման ագրեգատ (գործիք): Տվյալ դեպքում «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն հայտով ներկայացրել է «Վագներ» ապրանքանիշի երկու գործիք՝ «Վագներ 2600» և «Վագներ 2800»: «Վագներ 2800» բարձր ճնշման ագրեգատ գոյություն չունի: «Վագներ»-ը լինում է երկու տեսակ՝ «Վագներ 2600» և «Վագներ 7000», որոնք իրարից տարբերվում են միաֆազ և եռաֆազ աշխատանքային հոսանքով:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ մասնակիցը մասնակցել է տվյալ մրցույթին՝ չտիրապետելով այն գործիքակազմին, որով պետք է կատարեր տվյալ աշխատանքը:

2. «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է Կամո Մատինյանի առաջին բժշկական օգնություն դասընթացի վկայականը:

3. Ներկայացվել է ռուսական ընկերության կողմից տրված բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով աշխատելու թույլտվությունը, որտեղ հստակ նշված է, որ այն անձը, ով տիրապետում է այդ թույլտվությանը, պետք է տարին մեկ անգամ անցնի վերապատրաստման դասընթաց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և նախագծով պահանջվել է տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, սակայն «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն չի ներկայացրել ո՛չ գնահատման փուլում, ո՛չ էլ, առավել ևս, փաստաթղթերի անհամապատասխանելիությունը շտկելու փուլում: Այդ պատճառով էլ օրենքի ուժով զրկվել է կրկնակի շտկում կատարելու իրավունքից:

Բողոքաբերը նշում է այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը սխալ է գնահատել «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի փաստաթղթերը, որ ներկայացված սերտեֆիկատը մինչև 30.06.2021թ.-ը ուժի մեջ է:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ այդ սերտեֆիկատի պահանջը, որ Պատվիրատուի կողմից դրվել է նախագծային աշխատանքների ժամանակ, չի եղել ինքնանպատակ: Պատվիրատուն նպատակ է ունեցել փաստաթղթի (սերտեֆիկատի) ուժի մեջ լինելը (գործող լինելը) փաստացի աշխատանքների կատարման ժամանակ:

Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը գործել է առավել քան իրավաչափ՝ հիմք ընդունելով 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն կառավարության որոշման 67-րդ կետը, պատճառաբանված որոշում կայացնելու համար հարցում է կատարել, որով ստուգել է մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը. «Վոլոդյա Բաղդասարյանին տրված թույլտվությունը գործում է մինչև 30.06.2021թ.-ը, ավտոմատ (ինքնաբերաբար) չի երկարացվում, իսկ եթե անձը ցանկանում է երկարացնել այդ փաստաթղթի ժամկետը, ապա նա պետք է անցնի դասընթաց-վերապատրաստում, հանձնի քննություն, քննության արդյունքի դրական լինելուց հետո նրան կտրամադրվի նոր սերտեֆիկատ»:

Բողոքաբերի կողմից այն պնդումը, որ ունի նոր փաստաթուղթ, չի կարող դիտվել իրավաչափ, քանզի վերջինս նոր սերտեֆիկատը չի ներկայացրել ո՛չ գնահատման փուլում, ո՛չ էլ, առավել ևս, փաստաթղթերի անհամապատասխանելիությունը շտկելու փուլում (Հիմք՝ 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն կառավարության որոշման 41-րդ և 42-րդ կետեր):

Թերությունները շտկելու ժամկետի տրամադրումն ինքնապատակ գործողություն չէ: Օրենսդիրը կանխատեսելով, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող են առկա լինել սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններ, գտել է, որ անձին պետք է տրամադրվի մեկ աշխատանքային օր ժամկետ թերությունները շտկելու համար:

Սակայն ժամկետային սահմանափակումը չի կարող անսահմանափակ լինել, քանի որ այդ դեպքում էլ կխախտվի հայտերի արդարացի գնահատման պահանջը:

Նույն տրամաբանությամբ, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հնարավորություն էր տրվել բողոքաբերին շտկել թերությունները, ապա վերջինս պարտավոր էր այդ ժամկետում ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Սակայն բողոքաբերը պնդում է, որ ունի ինչ-որ նոր փաստաթղթեր՝ անտեսելով օրենսդրի կողմից սահմանված ժամկետային սահմանափակումները:

Պետք է նկատել, որ բողոքաբերն իր կողմից ներկայացված բողոքի մեջ վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը և պատճառաբանել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն և պաշտոնատար անձինք ազատ չեն և պարտավոր են կատարել միայն այն գործողությունները, որոնց համար լիազորված են ՀՀ սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ցանկանում եմ հայտնել, որ Պատվիրատուն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չէ և ոչ էլ իշխանական գործառույթ իրականացնող պաշտոնատար անձ, ուստի վկայակոչված նորմը չի տարածվում այդ անձանց գործողությունների վրա:

Սակայն, կրկնում և պնդում եմ, որ Պատվիրատուն տառացի և բառացի պահպանել է Սահմանադրության և ՀՀ այլ օրենսդրության նորմերի պահանջները: Դա է պատճառը, որ բողոքաբերը բողոքով չի կարողացել հայտնել, թե գնահատող հանձնաժողովն իր ո՞ր լիազորությունն է սահմանազանցել կամ թե գնահատող հանձնաժողովն իր գործողություններով օրենքի կամ դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերի ո՞ր դրույթներն է խախտել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Բողոքաբերը հստակ պետք է նշի (ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդված՝ որոշակիության սկզբունք) թե անձի, տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի ո՞ր գործողությունն է կոնկրետ բերել «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի համար ոչ նպաստավոր հետևանքի՝ հստակեցնելով նաև «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի ո՞ր իրավունքն է խախտվել:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների

ձեռքբերման նպատակով 08.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 2-րդ չափաբաժնի՝ «ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրի 1.10-րդ կետի համաձայն՝ աշխատանքներ իրականացնողները պետք է ունենան «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքի բնօրինակը, ինչը պետք է ներկայացվի որակավորման փուլում:

iii. Հավելված 1-ով սահմանվել է նաև «աշխատանքային ռեսուրսներ». Աշխղեկ՝ առնվազն 1, ներկարար բանվոր՝ առնվազն 4 հոգի:

iv. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 15.06.2021թ.-ի ժամը 15:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների, 2-րդ չափաբաժնի մասով, հայտ են ներկայացրել նաև «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն և «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 16.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ «Վոլոդյա Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով հրավերով պահանջվող փաստաթղթերի մի մասը՝ Հավելված 1՝ Դիմում-հայտարարությունը, Հավելված 2՝ Գնային առաջարկը, Հավելված 1.1՝ Սարքերի և սարքավորումների նկարագիրը, չի ներկայացվել՝

1. Գնային առաջարկին կից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հաշվի առնելով կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

2. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/:

vi. Նույն արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման

ժամկետի ավարտը 17.06.2021թ.-ը ժամը 14:00-ն շտկել նշված անհամատասխանությունները:

vii. Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից որպես շտկում ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա/ «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» վկայականում նշված է վավերականության ժամկետը՝ մինչև 06.2021թ.-ը:

բ/ Արթուր Հարությունի Անդրեասյանին /աշխղեկ/ ՕՀՄ ДПО «УЦ«УККОМ-Центр»-ի կողմից տրված վկայականում նշված 10.07.2019 - 10.07.2022 ժամկետի ընթացքում մասնակցի կողմից չի ներկայացվել՝ 2020թ.-2021թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացությունը ստուգումները անցած որևիցե փաստաթուղթ համաձայն «Բարձրության վրա աշխատելիս աշխատանքի պաշտպանության կանոններ»-ի 15-րդ կետի /Правила по охране труда при работе на высоте п. 15/:

Սույն արձանագրության «ա» ենթակետով ներկայացված փաստաթղթի գործողության վերջնաժամկետի հետ կապված և հետագա գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կատարվել է հարցում «ՀՀ Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ ուսումնական կենտրոն, որին ի պատասխան ստացվել է հետևյալը.

«Նշված սերտիֆիկատը ուժի մեջ է մինչև 30.06.2021թ.: Նշված անձը կամ այդ անձը ներկայացնող ընկերությունը կարող է դիմել մեզ սերտիֆիկատի երկարացման համար, անցնելով համապատասխան ուսուցում-վերապատրաստում»:

Քանի որ աշխատանքների կատարումը իրականացվելու է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ պարզաբանումից ելնելով կարելի է ենթադրել, որ պայմանագրի կատարման ընթացքում համապատասխան ուսուցում-վերապատրաստումից հետո կարող է և չերկարաձգվել վկայականի ժամկետը:

Սույն արձանագրության «բ» ենթակետով տրված փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկատվություն:

viii. Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

ix. Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն:

x. www.gnumner.am համացանցային կայքում 29.06.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

xi. «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, որպես մասնակցի հարկ վճարողի հաշվառման համար նշել է 43194072, իսկ իրական շահառուների մասին տեղեկություն դաշտում նշել է՝ Վոլոդյա Բաղդասարյան Արազի (Անուն, Ազգանուն, Հայրանուն):

xii. https://petekamutner.am/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 43194072 թվերով հարկ վճարողի հաշվառման համարի ներքո գրանցված է միայն մեկ կազմակերպություն՝ «Վոլոդյա Բաղդասարյան» Ա/Ձ-ն, իսկ https://www.e-register.am/ կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 43194072 թվերով հարկ վճարողի հաշվառման համարի ներքո գրանցված է միայն մեկ կազմակերպություն՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից 02.07.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման

նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ չափաբաժնի՝ «ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրի 1.10-րդ կետով սահմանվել է, որ աշխատանքներ իրականացնողները պետք է ունենան «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքի բնօրինակը, ինչը պետք է ներկայացվի որակավորման փուլում: Սահմանվել է նաև «աշխատանքային ռեսուրսներ». Աշխղեկ՝ առնվազն 1, ներկարար բանվոր՝ առնվազն 4 հոգի:

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 15.06.2021թ.-ի ժամը 15:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների, 2-րդ

չափաբաժնի մասով, հայտ են ներկայացրել նաև «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն և «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վոլոդյա Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ. չի ներկայացվել՝

1. Գնային առաջարկին կից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հաշվի առնելով կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

2. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/:

Նույն արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը 17.06.2021թ.-ը ժամը 14:00-ն շտկել նշված անհամատասխանությունները:

Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից որպես շտկում ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանությունները, մասնավորապես՝

ա/ «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» վկայականում նշված է վավերականության ժամկետը՝ մինչև 06.2021թ.-ը:

բ/ Արթուր Հարությունի Անդրեասյանին /աշխղեկ/ ՕՀՍ ДПО «УЦ«УККОМ-Центр»-ի կողմից տրված վկայականում նշված 10.07.2019 - 10.07.2022 ժամկետի ընթացքում մասնակցի կողմից չի ներկայացվել՝ 2020թ.-2021թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացությունը ստուգումները անցած որևիցե փաստաթուղթ համաձայն «Բարձրության վրա աշխատելիս աշխատանքի պաշտպանության կանոններ»-ի 15-րդ կետի /Правила по охране труда при работе на высоте п. 15/:

Սույն արձանագրության «ա» ենթակետով ներկայացված փաստաթղթի գործողության վերջնաժամկետի հետ կապված և հետագա գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կատարվել է հարցում ՀՀ Վտանգավոր բարձրություն ՍՊԸ ուսումնական կենտրոն, որին ի պատասխան ստացվել է հետևյալը.

«Նշված սերտիֆիկատը ուժի մեջ է մինչև 30.06.2021թ.: Նշված անձը կամ այդ անձը ներկայացնող ընկերությունը կարող է դիմել մեզ սերտիֆիկատի երկարացման համար, անցնելով համապատասխան ուսուցում-վերապատրաստում»:

Քանի որ աշխատանքների կատարումը իրականացվելու է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ պարզաբանումից ելնելով կարելի է ենթադրել, որ պայմանագրի կատարման ընթացքում համապատասխան ուսուցում-վերապատրաստումից հետո կարող է և չերկարաձգվել վկայականի ժամկետը:

Սույն արձանագրության «բ» ենթակետով տրված փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկատվություն:

Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերը, Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը և «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի հայտը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշման արդյունքում, թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.10-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերով «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» վկայականի վավերականության ժամկետի որևէ պահանջ չի սահմանվել: Հրավերով սահմանված չէ որևէ պահանջ, որ վկայականը աշխատանքների կատարելու ընթացքում պետք է վավեր լինի:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում

ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» վկայականը համապատասխանում է Հրավերի պահանջներին:

Ինչ վերաբերում է հանձնաժողովի 24.06.2021թ.-ին թիվ 3 արձանագրության «բ» ենթակետով արձանագրված անհամապատասխանությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական

լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

ՌԴ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության 28.03.2014թ.-ի թիվ 155ն հրամանով հաստատված հավելվածով՝ «Բարձրության վրա աշխատելիս աշխատանքի պաշտպանության կանոններ»-ի (այսուհետ՝ Կանոններ) 15-րդ կետի համաձայն՝ բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացությունը ստուգվում է առնվազն տարին մեկ անգամ: Բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացության այս թեստը կարող է իրականացվել գործատուի կողմից ստեղծված ատեստավորման հանձնաժողովի կողմից: Բարձրության վրա աշխատանք կատարելու համար անվտանգ մեթոդների և տեխնիկայի գիտելիքների ստուգման արդյունքները փաստագրվում են արձանագրության մեջ, որում նշվում է գիտելիքի թեստի ամսաթիվը, ազգանունը, անունը, գիտելիքի թեստ անցած անձի հայրանունը, գիտելիքների ստուգման արդյունքները:

Նույնաբովանդակ դրույթ է սահմանված ՌԴ աշխատանքի նախարարության 16.11.2020թ.-ի թիվ 782ն «Բարձրության վրա աշխատելու ժամանակ աշխատանքի պաշտպանության կանոնները հաստատելու մասին» հրամանի 32-րդ կետով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության «բ» ենթակետով արձանագրվել է, որ Արթուր Հարությունի Անդրեասյանին /աշխղեկ/ ՕՀՄ ДПО «УЦ«УККОМ-Центр»-ի կողմից տրված վկայականում նշված 10.07.2019 - 10.07.2022 ժամկետի ընթացքում մասնակցի կողմից չի ներկայացվել՝ 2020թ.-2021թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացությունը ստուգումները անցած

որևիցե փաստաթուղթ, համաձայն՝ «Բարձրության վրա աշխատելիս աշխատանքի պաշտպանության կանոններ»-ի 15-րդ կետի /Правила по охране труда при работе на высоте п. 15/, ուստի տրված փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկատվություն:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը, գտնելով, որ փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկատվություն, պետք է կիրառեր Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերով սահմանված դրույթները և Արթուր Հարությունի Անդրեասյանի 2020թ.-2021թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար բարձրության վրա աշխատանք կատարելու անվտանգ մեթոդների և տեխնիկայի իմացության ստուգումները անցած լինելու հանգամանքի իսկությունը ստուգելու համար հարցում ներկայացներ Արթուր Հարությունի Անդրեասյանի գործատուին՝ հիմք ընդունելով Կանոնների 15-րդ կետի դրույթները, և այն փաստի հաշվառմամբ, որ Հրավերով այդպիսի պահանջ սահմանված չէ: Հրավերով սահմանվել է «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն» համապատասխան վկայականի առկայություն, որն էլ բողոքաբերի կողմից ներկայացվել է Հանձնաժողովին: Ուստի, սույն դեպքում, Հանձնաժողովն իրավասու չէր փաստաթղթի ոչ ամբողջական լինելու հանգամանքով անբավարար գնահատել Ընկերության ներկայացրած հայտը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ին թիվ 3 արձանագրությամբ կայացված «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու ու մերժելու և պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները դադարեցնելու պահանջների մասին բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով բողոքի՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ Ընկերությունը ընտրված մասնակից կարող է ճանաչվել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով սահմանված պահանջների պատշաճ կատարմամբ. Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից դեռ պետք է կիրառվի Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերի դրույթները, որից հետո իրականացվի «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրություն՝ գնահատում,

հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Այդ գնահատման արդյունքում է հնարավոր փաստել բողոքաբերի՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հանգամանքը, որից հետո նոր միայն Հանձնաժողովն իրավասու է «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն հայտարարել ընտրված մասնակից:

Անդրադառնալով Պատվիրատուի և Երրորդ անձի կողմից ներկայացված այն փաստարկին, որ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է Կամո Մատինյանի առաջին բժշկական օգնություն դասընթացի վկայականը, և տրվել է միայն «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով» վկայական, առանց «առաջին բուժ, օգնության» նշման, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ և Բողոքաբերի կողմից ներկայացված հայտում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունն ու գնահատումը պետք է իրականացնի գնահատող հանձնաժողովը, ելնելով Օրենքի 26-րդ հոդվածի դրույթներից, ինչպես նաև այն հանգամանքով պայմանավորված, որ Պատվիրատուի կողմից բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը Բողոքներ քննող անձին տրամադրվել են Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի խախտմամբ՝ ոչ ամբողջական:

Անդրադառնալով Մասնակցի կողմից թիվ «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի հայտում առկա անհամապատասխանությանը, մասնավորապես՝ վերջինիս կողմից մասնակցի անվանման մեջ Հայրանունը չնշելու վերաբերյալ Երրորդ անձի կողմից ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության լույսի ներքո, վերջինիս սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու հայտում հարկ վճարողի հաշվառման համարը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն և «Վոլոդյա Բաղդասարյան» Ա/Ձ-ն նույն իրավաբանական անձն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, հարկ վճարողի հաշվառման համարը հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից 02.07.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/60 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Պարտավորեցնել «ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու ու մերժելու և պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները:
3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**